

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻՑ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ «Ստացող»,

եւ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ միջազգային կազմակերպությունը, որն ստեղծվել է գործում է Ռուսաստանի Դաշնության եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» 2006 թվականի հունվարի 12-ին կնքված համաձայնագրի հիման վրա, Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչն է եւ հանդես է գալիս դրա մասնակիցների անունից եւ հանձնարարությամբ՝ ղեկավարվելով «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրով, «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրով ու Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի խորհրդի 2022 թվականի մարտի 5-ի որոշմամբ, թիվ 75 արձանագրությամբ, այսուհետ՝ **«Կառավարիչ»,**

կնքեցին «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» սույն համաձայնագիրը (այսուհետ՝ **«Համաձայնագիր»**)՝ հետեւյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ 1. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1.1. Համաձայնագրի անբաժանելի մասն են Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի Ստանդարտ պայմանները (այսուհետ՝ «Ստանդարտ պայմաններ») (Համաձայնագրի թիվ 1 հավելված), որոնք Կառավարչի կողմից հաստատվել են «Հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին (թ) կետին համապատասխան (Եվրասիական զարգացման բանկի վարչության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 27/ԿԶԵՀ արձանագրություն) եւ հիմնադրամի պաշտոնական փաստաթուղթն են՝ «Հիմնադրամի մասին» հիմնադրույթի 2-րդ հոդվածին համապատասխան:

1.2. Համաձայնագրի մեջ գործածվող եզրույթները եւ սահմանումներն ունեն նույն իմաստը, ինչ Ստանդարտ պայմաններում՝ բացառությամբ հետեւյալի՝

«Ծրագիր»՝ տնտեսական աճի ներուժի ավելացմանը, աշխատանքի շուկայի արդյունավետության բարձրացմանը եւ կայուն զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության հնգամյա ծրագիր, ի աջակցություն որի տրամադրվում է Ֆինանսական վարկը, եւ որը ներառված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից ստորագրված (2023 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 01/5-1/18576-2023) Մտադրությունների նամակում, որի անբաժանելի մասերն են՝ Միջոցառումների կոնկրետ պայմանները եւ դրանց կատարման պարամետրերը պարունակող՝ 2023 թվականի տնտեսական քաղաքականության միջոցառումների մատրիցան. եւ Ծրագրի պատշաճ մոնիթորինգի անցկացման համար ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը մասնավորեցնող Տեխնիկական հուշագիրը, որոնք ստորագրվել են Հայաստանի Հանրապետության ֆինանսների փոխնախարարի կողմից (2023 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 04/5-1/19452-2023):

Ի փոփոխումն կամ ի լրումն Ստանդարտ պայմանների՝ գործածվող որոշ եզրույթների նշանակությունը սահմանվում է Համաձայնագրի համատեքստում:

ՀՈԴՎԱԾ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2.1. Կառավարիչը հիմնադրամի մասնակիցների անունից եւ նրանց հանձնարարությամբ՝ հիմնադրամի միջոցներից Ստացողին է տրամադրում Ֆինանսական վարկ՝ 100.000.000,00 (Հարյուր միլիոն) ԱՄՆ դոլարի չափով՝ Համաձայնագրով սահմանված կարգով եւ պայմաններով:

2.2. Ֆինանսական վարկն ստանալու համար Ստացողը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Կառավարչի համար ընդունելի պայմաններով բացում եւ վարում է վարկի արժույթով առանձին հաշիվ (այսուհետ՝ «Հաշիվ»)՝ ներառյալ որեւէ հայցից, բռնագրավումից, մորատորիումից եւ ոչ նպատակային օգտագործումից Հաշվի վրա առկա միջոցների պատշաճ պաշտպանության ապահովումը:

2.3. Ֆինանսական վարկն Ստացողին է տրամադրվում հետեւյալ կարգով.

2.3.1. Ֆինանսական վարկն Ստացողին է տրամադրվում մեկ տրանշով՝ 2023 կամ 2024 թվականին՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն ուղղված ընթացակարգերն Ստացողի կողմից փաստացիորեն ավարտելուց կախված:

2.3.2. Ֆինանսական վարկն Ստացողին է տրամադրվում միջոցների տրամադրման մասին Հայտի հիման վրա, որն Ստացողի կողմից պատրաստվել եւ ձեակերպվել է Ստանդարտ պայմանների 2.01 բաժնի եւ Համաձայնագրի թիվ 2 հավելվածի պահանջներին համապատասխան, եւ որն ստորագրվել է Ստացողի անունից՝ Ստացողի լիազորված անձի կողմից, եւ Կառավարչին է ներկայացվել հետեւյալ նախնական պայմանները կատարելուց հետո՝

ա) Ստացողը կատարել է Ծրագրի՝ Ֆինանսական վարկի համապատասխան տրանշն Ստացողին տրամադրելու պայման հանդիսացող միջոցառումները եւ Կառավարչին է ուղարկել նշված միջոցառումների կատարման

մասին հաշվետվությունը՝ Համաձայնագրի 4.3 կետի 4.3.1 ենթակետին համապատասխան.

բ) Հիմնադրամի խորհուրդն ուսումնասիրել է Ծրագրի միջոցառումների կատարման մասին Ստացողի հաշվետվության՝ Կառավարչի գնահատումը եւ Ֆինանսական վարկի համապատասխան տրանշը Ստացողին տրամադրելու մասին որոշում է ընդունել:

2.3.3. Ֆինանսական վարկն Ստացողին է տրամադրվում բացառապես Համաձայնագրի 2.2 կետում նշված Հաշվին փոխանցելու միջոցով՝ վարկի Արժույթով, ինչպես նախատեսված է Ստանդարտ պայմանների 2.03 բաժնով:

2.4. Ֆինանսական վարկի տրանշի տրամադրման ամսաթիվ է Կառավարչի՝ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնի դրույթներին համապատասխան նշված կամ որոշվող թղթակցային հաշվից դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:

2.5. Ֆինանսական վարկի միջոցներն Ստացողի կողմից օգտագործվում են Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար: Համաձայնագրի նպատակներով Ընդունելի ծախսեր են Ստացողի կողմից Ֆինանսական վարկի միջոցների օգտագործումը բյուջեի այն ծախսերի ֆինանսավորման համար, որոնք հաստատվում են «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ Ֆինանսական վարկի փաստացի տրամադրման տարվանից կախված՝ Ֆինանսական վարկի միջոցները Համաձայնագրի 2.2 կետում նշված Հաշվից Ստացողի՝ Ֆինանսների նախարարության գանձապետական միասնական հաշվին փոխանցելու միջոցով: Ստացողի կողմից Հաշվից միջոցների փոխանցումը պետք է ավարտվի մինչեւ Համաձայնագրի թիվ 3 հավելվածին համապատասխան նշված կամ որոշվող՝ վարկի հասանելիության ժամանակահատվածի Ավարտի ամսաթիվը:

2.6. Ֆինանսական վարկն Ստացողին է տրամադրվում մինչև Համաձայնագրի թիվ 3 հավելվածին համապատասխան նշված կամ որոշվող՝ վարկի հասանելիության ժամանակահատվածի Ավարտի ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՈՒՄԸ

3.1. Ստացողը Կառավարչին գումարները վճարում է Ֆինանսական վարկի սպասարկման եւ մարման հաշվին («Վարկի գծով վճարումներ»)՝ Ֆինանսական վարկի Պայմաններին համապատասխան (Համաձայնագրի թիվ 3 հավելված)՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «ա», «գ» եւ «դ» կետերի, ինչպես նաեւ 3.04-3.06 բաժինների պահանջները: Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «բ» կետը չի կիրառվում:

3.2. Ստացողն իրավունք ունի կատարելու Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքի գումարների վաղաժամկետ մարում՝ Ստանդարտ պայմանների 3.02 բաժնում շարադրված կարգով եւ պայմաններով:

3.3. Եթե Կառավարիչն ստանա ավելի քիչ գումար, քան այդ գումարն ստանալու պահին Վարկի՝ Ստացողի կողմից վճարման ենթակա ամբողջ գումարը, ապա Կառավարիչն այդպերպ ստացված գումարը հաշվում է Վարկի գծով վճարումների մարման հաշվին՝ Ստանդարտ պայմանների 3.03 բաժնով սահմանված հերթականությանը համապատասխան:

3.4. Վարկի (Հիմնական պարտքի, Տոկոսների, տուժանքի, ինչպես նաեւ դրամական այլ գումարների, եթե դա կիրառելի է) վճարումների իրականացման գծով Ստացողի պարտավորությունների կատարման ամսաթիվ է դրամական միջոցները Կառավարչի թղթակցային հաշվին այն վավերապայմաններով մուտքագրելու ամսաթիվը, որոնք նշված են Համաձայնագրի 9-րդ հոդվածում, կամ դրանց փոփոխման դեպքում՝ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնին համապատասխան Ստացողին ուղարկված Կառավարչի ծանուցման մեջ:

ՀՈԴՎԱԾ 4. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏ

4.1. Ստացողը պարտավորվում է կատարել Ծրագիրը՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի պահանջները:

Ծրագիրը գործում է մինչև դրանում ներառված՝ Ստացողի պարտավորությունները կատարելու պահը կամ Հիմնադրամի խորհրդի կողմից նոր Ծրագրին հավանություն տալու պահը:

4.2. Ստացողն ապահովում է Ծրագրի մոնիթորինգը եւ գնահատումը՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «ա»-«գ» կետերը՝ կիրառելով Ծրագրում նշված ցուցանիշները:

4.3. Ստացողը Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «գ» կետով նախատեսված հաշվետվությունները Կառավարչին ներկայացնում է Ծրագրի իրագործման ամբողջ ժամանակահատվածում, այդ թվում՝

4.3.1. Ֆինանսական վարկի տրանշի տրամադրման պայմանների կատարման աստիճանից կախված՝ Ստացողը Կառավարչին է ներկայացնում Ծրագրի միջոցառումների կատարման եւ դրա իրագործման ընթացքի գնահատման պլանավորված ցուցանիշների ապահովման մասին հաշվետվություն, որը ձեւի եւ բովանդակության առումով բավարարում է Կառավարչին.

4.3.2. եռամսյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտին հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, Ստացողը Կառավարչին է տրամադրում լրացած օրացուցային եռամսյակի համար Հաշվի վրա դրամական միջոցների շարժի մասին Հաշվետվություն, որը պարունակում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Հաշվի վրա միջոցների մնացորդի, ինչպես նաեւ հաշվետու ժամանակահատվածի համար Հաշվին առնչվող մուտքագրման եւ ելքագրման բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվություն. գործարքի ամսաթիվը, դուրսգրման կամ համալրման հաշիվը,

գործարքի ծավալը եւ նպատակը, ինչպես նաեւ՝ փոխարկման փոխարժեքը: Ստացողի կողմից առաջին հաշվետվությունը ներկայացվում է այն եռամսյակի համար, որի ընթացքում Ստացողն ստացել է Ֆինանսական վարկի միջոցները: Ստացողի կողմից վերջին հաշվետվությունը ներկայացվում է այն եռամսյակի համար, որի ընթացքում կատարվել է Հաշվից միջոցների վերջին փոխանցումը՝ առանց մնացորդի:

4.3.3. վարկի հասանելիության ժամանակահատվածի Ավարտի ամսաթիվը վրա հասնելուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում Ստացողը ներկայացնում է Հաշվի վրա դրամական միջոցների շարժի մասին Վերջնական հաշվետվություն՝ Ֆինանսական վարկի առաջին միջոցները Հաշվին մուտքագրելու ամսաթվից մինչեւ այն ամսաթիվն ընկած ժամանակահատվածի համար, որի ընթացքում ավարտվել է Ստացողի կողմից Հաշվից միջոցների օգտագործումը, աուդիտորի եզրակացության հետ միասին՝ Համաձայնագրի 4.4 կետին համապատասխան:

4.3.4. Ծրագրին համապատասխան՝ պարբերական այլ հաշվետվություններ, որոնք ձեւի, բովանդակության եւ տրամադրման ժամկետների առումով բավարարում են Կառավարչին:

4.4. Հաշվի վրա դրամական միջոցների շարժի մասին վերջնական հաշվետվությունը պետք է ենթարկվի աուդիտորական ստուգման՝ Կառավարչի կողմից հավանության արժանացած անկախ աուդիտորի կողմից: Աուդիտը պետք է անցկացվի Ստացողի հաշվին՝ միանվագ, Ֆինանսական վարկի առաջին միջոցները Հաշվին մուտքագրելու ամսաթվից մինչեւ այն ամսաթիվն ընկած ժամանակահատվածի համար, որի ընթացքում ավարտվել է Ստացողի կողմից Հաշվից միջոցների օգտագործումը:

4.5. Ծրագրի իրագործման մասին վերջնական հաշվետվությունը Ստացողի կողմից ներկայացվում է Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «դ» կետի դրույթներին համապատասխան:

4.6. Ստացողի եւ Կառավարչի միջեւ փոխգործակցությունն իրականացվում է

Ստանդարտ պայմանների 4.03 եւ 4.04 բաժինների համաձայն:

4.7. Ստացողը գրավոր հարցման հիման վրա Կառավարչին է տրամադրում իր տարածքում ֆինանսական եւ տնտեսական պայմանների վերաբերյալ տեղեկատվություն, որի համար Կառավարիչը հիմնավորված հարցում է ներկայացնում՝ Ստանդարտ պայմանների 5.01 բաժին համապատասխան:

4.8. Ստացողը կորոշի այն պետական մարմինը կամ մարմինները, որոնք լիազորված են Ծրագրի իրագործման, Ֆինանսական վարկի միջոցների նպատակային օգտագործման, Համաձայնագրին առնչվող հաշվետվությունների ձեւավորման, Վարկի գծով վճարումների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

4.9. Ստացողը կատարում է Ստանդարտ պայմանների 6.01 բաժնի դրույթները՝ Ֆինանսական վարկի ապահովման մասով:

ՀՈԴՎԱԾ 5. ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

5.1. Ֆինանսական վարկի միջոցներն օգտագործելու Ստացողի իրավունքը կասեցնելը, չեղարկելը, Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքը վաղաժամկետ մարելու մասին պահանջ ներկայացնելը Կառավարչի կողմից իրականացվում են Ստանդարտ պայմանների VII հոդվածով նախատեսված դեպքերում եւ կարգով՝ դրանում նշված հետեւանքներով:

5.2. Հիմնական պարտքի վերադարձման, Տոկոսների վճարման եւ (կամ) Համաձայնագրով այլ վճարումների գծով պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում Ստացողը Կառավարչին է վճարում մարումն ուշացնելու համար տուժանք՝ յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց պարտավորության ամբողջ գումարի 0,01%-ի (Զրո ամբողջ մեկ հարյուրերորդական տոկոս) չափով, որը հաշվեգրվում է Ստանդարտ պայմանների 7.06 բաժնին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

6.1. Համաձայնագրով վեճերը կարգավորվում են Ստանդարտ պայմանների 8.03 բաժնին համապատասխան՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 8.01 եւ 8.02 բաժիններով նախատեսված պարտավորությունների կատարմանը Ստացողին հարկադրելու մասով Կառավարչի հնարավորությունների եւ իրավունքների մասին դրույթները՝ բացառությամբ Ստանդարտ պայմանների 8.01 կետի «Ե» ենթակետի:

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Համաձայնագրի մասով Կառավարչի պարտավորություններն ուժի մեջ են մտնում այն օրը («Ուժի մեջ մտնելու ամսաթիվ»), երբ Կառավարիչը Ստացողին ուղարկի ծանուցում այն մասին, որ ինքն ընդունել է Ստացողի կողմից հետեւյալ պայմանները կատարելու վերաբերյալ իրեն բավարարող ապացույցները՝

ա) Համաձայնագիրն ստորագրված է Ստացողի անունից՝ այն անձի կողմից, որն ունի պատշաճ կերպով ձեւակերպված լիազորություններ.

բ) Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի բոլոր լիազորված մարմինների կողմից՝ նրա օրենսդրությամբ սահմանված կարգով.

գ) Հիմնադրամի խորհուրդը հավանության է արժանացրել Ծրագիրը,

դ) Ստացողը բացել է Հաշիվ՝ Համաձայնագրի 2.2 կետի պահանջներին համապատասխան Ֆինանսական վարկի մուտքագրման համար:

Այն դեպքում, երբ ուժի մեջ մտնելու մասին ծանուցումն ուղարկելը Կառավարչի կողմից հետաձգվել է՝ Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «բ» կետի դրույթներին համապատասխան, Կառավարիչը դրա մասին ծանուցում է Ստացողին՝ նշելով ուժի մեջ մտնելու համար խոչընդոտ հանդիսացող իրադարձությունները:

7.2. Որպես ուժի մեջ մտնելու պայմանների կատարման հաստատում՝

Կառավարչին պետք է տրամադրվի Ստացողի Արդարադատության նախարարության եզրակացությունը (իրավաբանական եզրակացություն), որով հավաստվում է, որ ստորագրված Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից եւ նրա համար իրավապարտադիր է՝ սույն Համաձայնագրի պայմաններին, միջազգային իրավունքի նորմերին եւ Ստացողի ներպետական օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաեւ սույն հոդվածի 7.1 կետի «գ» եւ «դ» ենթակետերի պայմանն Ստացողի կողմից պատշաճ կատարելու հաստատումը:

7.3. Ուժի մեջ մտնելու բոլոր նախատեսված պայմանները՝ ներառյալ Կառավարչի կողմից իրավաբանական եզրակացությունն ստանալը, Ստացողի կողմից կատարվում են Կողմերի կողմից Համաձայնագիրն ստորագրելու օրվանից 180 (հարյուր ութսուն) օրը չգերազանցող ժամկետում: Նշված ժամկետը չպահպանելը հանգեցնում է Ստանդարտ պայմանների 9.03 բաժնով նախատեսված հետեւանքներին:

7.4. Համաձայնագրի եւ Կողմերի՝ Համաձայնագրով նախատեսված բոլոր պարտավորությունների գործողությունը դադարում է Ստանդարտ պայմանների 9.04 բաժնի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Կողմերի՝ Համաձայնագրին առնչվող ծանուցումները կամ հարցումներն ուղարկելը իրականացվում է Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի դրույթներին համապատասխան:

8.2. Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան՝ Համաձայնագրի նպատակներով Ստացողի լիազորված ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարն է եւ նրա կողմից Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան լիազորված անձը (անձինք):

Նշված անձի կամ անձանց լիազորությունները հաստատումները Ստացողի կողմից Կառավարչին են տրամադրվում Ստանդարտ պայմանների 10.03 բաժնին

համապատասխան: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից լիազորված անձանց ստորագրությունների նմուշները պետք է հաստատվեն նրա ստորագրությամբ:

8.3. Կառավարչի հասցեն՝ Ղազախստանի Հանրապետություն, 050051, քաղ. Ալմաթի, Դոստիկ պողոտա, տուն 220:

Ստացողի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, քաղ. Երեւան, Մելիք-Ադամյան փող. 1:

8.4. Համաձայնագրի բոլոր հավելվածները դրա անբաժանելի մասն են եւ բաղկացած են հետեւյալից՝

1) **թիվ 1 հավելված՝** Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմաններ.

2) **թիվ 2 հավելված՝** Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից Ֆինանսական վարկի տրանշի տրամադրման Հայտի օրինակելի ձեւ.

3) **թիվ 3 հավելված՝** Ֆինանսական վարկի պայմաններ:

ՀՈԴՎԱԾ 9. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԱՇՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

Eurasian Development Bank (Eurasian fund for stabilization and development)

Almaty, Kazakhstan, SWIFT: EABRKZKAACF

Correspondent account № 890-1003-441

with The Bank of New York Mellon, New York, USA

SWIFT: IRVTUS3N

Payment details: In favor of account № KZ147000000221100001

of Eurasian fund for stabilization and development

Համաձայնագիրն ստորագրվել է 2024 թվականի մայիսի «20»-ին, ռուսերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու նույնական օրինակներից՝ մեկական օրինակ՝ Կառավարչի եւ Ստացողի համար:

ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝

ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ՝

Վ.Մ. Հովհաննիսյան

Ա.Գ. Շիրոկով

Հայաստանի Հանրապետության

ԿԶԵՀ-ի նախագծային բլոկի

Ֆինանսների նախարար

Գործադիր տնօրեն

Թիվ 1 հավելված

**Հայաստանի Հանրապետության եւ
Եվրասիական զարգացման բանկի միջեւ**

**Կայունացման եւ զարգացման
Եվրասիական հիմնադրամի միջոցներից**

**«Ֆինանսական վարկի տրամադրման մասին»
2023 թվականի _____-ի համաձայնագրի**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական զարգացման բանկի

վարչության որոշմամբ

(2015 թվականի սեպտեմբերի 25-ի

թիվ 27/ԿԶԵՀ արձանագրություն)

ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ**

Բովանդակություն

ՀՈԴՎԱԾ I.

Ընդհանուր դրույթներ

Բաժին 1.01.

Ստանդարտ պայմանների կարգավիճակը

Բաժին 1.02.

Ստանդարտ պայմանների կիրառումը

Բաժին 1.03.	Եզրույթները եւ սահմանումները
Բաժին 1.04.	Հղումները եւ վերնագրերը
ՀՈՂՎԱԾ II.	Միջոցների հատկացումը
Բաժին 2.01.	Ֆինանսական վարկի միջոցների հատկացումը: Միջոցների հատկացման հայտերը:
Բաժին 2.02.	«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ընդունելի ծախսերը:
Բաժին 2.03.	Ֆինանսական վարկի հատկացման արժույթը:
Բաժին 2.04.	Հաշվառման վարումը:
Բաժին 2.05.	Արժույթների արժեքի գնահատումը:
ՀՈՂՎԱԾ III.	Ֆինանսական վարկի սպասարկումը եւ մարումը
Բաժին 3.01.	Վարկի գծով վճարումները:
Բաժին 3.02.	Հիմնական պարտքի վաղաժամկետ մարումը:
Բաժին 3.03.	Վարկի գծով մասնակի վճարումը:
Բաժին 3.04.	Վարկի գծով վճարումների կատարման ժամկետները:
Բաժին 3.05.	Վարկի գծով վճարման արժույթը:
Բաժին 3.06.	Վարկի գծով վճարման եղանակը:
ՀՈՂՎԱԾ IV.	Ծրագրի կատարումը:
Բաժին 4.01.	Ծրագրի կատարումը:
Բաժին 4.04.	Ծրագրի մոնիթորինգը եւ գնահատումը:
Բաժին 4.05.	Կառավարչի եւ ստացողի միջեւ փոխգործակցությունը:
Բաժին 4.06.	Ստացողի տարածքում ծրագրի ստուգումը:
ՀՈՂՎԱԾ V.	Տեղեկատվության տրամադրումը:
Բաժին 5.01.	Ֆինանսական եւ տնտեսական տվյալները:
ՀՈՂՎԱԾ VI.	Ֆինանսական վարկի ապահովումը:
Բաժին 6.01.	Ֆինանսական վարկի ապահովումը:
ՀՈՂՎԱԾ VII.	Զրոյացումը: Կասեցումը: Վաղաժամկետ մարման պահանջը:
Բաժին 7.01.	Ստացողի կողմից ֆինանսական վարկի գումարների զրոյացումը:
Բաժին 7.02.	Ստացողի՝ ֆինանսական վարկի միջոցների հատկացման իրավունքի կասեցումը:
Բաժին 7.03.	Ստացողի՝ ֆինանսական վարկի միջոցների հատկացման իրավունքի չեղարկումը:
Բաժին 7.04.	Զրոյացման դեպքում հիմնական պարտքի մարման ժամանակացույցի փոփոխումը:
Բաժին 7.05.	Ֆինանսական վարկի գծով հիմնական պարտքի վաղաժամկետ մարման մասին պահանջ ներկայացնելը:
Բաժին 7.06.	Վարկի գծով վճարումների մարման ուշացման համար տուժանքը:

Բաժին 7.07.

Ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի գործողությունը՝ վաղաժամկետ մարման մասին պահանջը չեղարկելուց, կասեցնելուց կամ ներկայացնելուց հետո:

ՀՈԴՎԱԾ VIII.

Պարտավորությունների հարկադիր կատարումը: Արբիտրաժը:

Բաժին 8.01.

Պարտավորությունների կատարմանը հարկադրելու հնարավորությունը:

Բաժին 8.02.

Իրավունքների իրականացման ուղացումները:

Բաժին 8.03.

Արբիտրաժը:

ՀՈԴՎԱԾ IX

Ուժի մեջ մտնելը: Գործողության դադարեցումը

Բաժին 9.01.

Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ մտնելու պայմանները:

Բաժին 9.02.

Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

Բաժին 9.03.

«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի գործողության դադարեցումը՝ ուժի մեջ չմտնելու պատճառով:

Բաժին 9.04.

«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի գործողության դադարեցումը:

ՀՈԴՎԱԾ X.

Այլ դրույթներ:

Բաժին 10.01.

Ծանուցումները եւ հարցումները:

Բաժին 10.02.

Ստացողի անունից գործողությունները:

Բաժին 10.03.

Ստացողի ներկայացուցչի լիազորությունների հաստատումը:

Բաժին 10.04.

«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի ձեւակերպումը:

I. Ընդհանուր դրույթներ

Բաժին 1.01. *Ստանդարտ պայմանների կարգավիճակը:*

Սույն «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմանները» (այսուհետ՝ Ստանդարտ պայմաններ) հաստատված են Կառավարչի կողմից «Հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 1«թ» կետին համապատասխան եւ Հիմնադրամի պաշտոնական փաստաթուղթն են՝ «Հիմնադրամի մասին հիմնադրույթի» 2-րդ հոդվածին համապատասխան:

Բաժին 1.02. *Ստանդարտ պայմանների կիրառումը:*

Սույն Ստանդարտ պայմանները կիրառվում են 2015 թվականի հունիսի 15-ից հետո ստորագրված՝ Ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի առնչությամբ:

Սույն Ստանդարտ պայմանները կիրառվում են «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» կոնկրետ համաձայնագրի առնչությամբ՝ այն ծավալով, որը նախատեսված է այդ համաձայնագրով: Եթե «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կամ դրա հավելվածի որեւէ դրույթ չի համապատասխանում Ստանդարտ պայմանների որեւէ դրույթի, կիրառվում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կամ համապատասխան հավելվածի դրույթը: «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում կարգավորող դրույթների բացակայության դեպքում գործում են Ստանդարտ պայմանների կիրառելի դրույթները՝ այս համաձայնագրին չհակասող մասով:

Քաժին 1.03. Եզրույթները եւ սահմանումները:

Եթե «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» կոնկրետ համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ստանդարտ պայմաններում եւ Ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերում կիրառվող եզրույթները եւ սահմանումներն ունեն հետեւյալ իմաստը՝

ա) Ակտիվներ՝ ցանկացած գույք, ֆինանսական միջոցներ, եկամուտներ եւ պահանջի իրավունքներ:

բ) Վարկի արժույթ՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված արժույթ (ԱՄՆ դոլար եւ (կամ) եվրո), որով նոմինացվել է ֆինանսական վարկը: Եթե ֆինանսական վարկը նոմինացվել է մեկից ավելի արժույթով, ապա «Վարկի արժույթ» եզրույթը վերաբերում է այդ արժույթներից յուրաքանչյուրին:

գ) Արտաքին պարտք՝ Ստացողի ցանկացած պարտք, որը ենթակա է կամ կարող է ենթակա լինել որեւէ արժույթով վճարման՝ ցանկացած այլ պետության կամ ՄՖԿ-ի:

դ) Պետական ակտիվներ՝ Ստացողի, Ստանդարտ պայմանների 5.01 բաժնի «բ» կետում նշված դրա սուբյեկտներից, ցանկացած քաղաքական կամ վարչական մարմնի եւ ցանկացած կազմակերպության ակտիվներ՝ ներառյալ ցանկացած այնպիսի հաստատությունում գտնվող ոսկու եւ արժույթի պաշարները (պահուստները), որն իրականացնում է կենտրոնական (ազգային) բանկի կամ Ստացողի արժույթի կայունացման հիմնադրամի կամ համանման գործառույթներ:

ե) Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «ա» կետին համապատասխան որոշվող ամսաթիվ, որը վրա հասնելու դեպքում ուժի մեջ են մտնում Ֆինանսական վարկը տրամադրելու մասով Կառավարչի պարտավորությունները:

զ) Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվ՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված ամսաթիվ կամ այլ՝ ավելի ուշ ամսաթիվ, որը Կառավարիչը կարող է սահմանել Ստացողի դիմումի եւ Հիմնադրամի խորհրդի որոշման հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան ծանուցում ուղարկելով Ստացողին, որը վրա հասնելուց հետո ֆինանսական վարկի միջոցներն ստանալու Ստացողի իրավունքը դադարում է:

է) Վճարման ամսաթիվ՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված յուրաքանչյուր ամսաթիվ, որով վճարման են ենթակա Ստանդարտ պայմանների 3.01 բաժնում նշված՝ Վարկի գծով վճարումները:

ը) Հիմնական պարտքի մարման ամսաթիվ՝ վճարման յուրաքանչյուր ամսաթիվ, որը վրա հասնելու դեպքում ենթակա է մարման Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքի ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

թ) Հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագիր՝ «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագիր, որն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվա քաղաքում, Հիմնադրամի հիմնադիր պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության կողմից:

ժ) ԼԻԲՈՐ՝ Լոնդոնի միջբանկային առաջարկի տոկոսադրույք (London Inter Bank Offer Rate), որը սահմանվում է Բրիտանական բանկիրների ասոցիացիայի (British Banker's Association) կողմից Վարկի արժույթով վեցամսյա ավանդների համար, արտահայտվում է տարեկան տոկոսներով, սահմանվում է Reuters screen-ի համապատասխան էջի տվյալներին համապատասխան Գրինվիչի ժամանակով առավոտյան ժամը 11:00-ի դրությամբ այն ամսաթվով, որը վրա է հասնում Լոնդոնում այն T ամսաթվից 2 աշխատանքային օր առաջ,

որտեղ T-ն այն ժամանակահատվածի առաջին օրն է, որի համար կատարվում է տոկոսների հաշվարկը՝ ըստ «Միջոցների տրամադրման մասին» համաձայնագրի: Այն դեպքում, երբ Reuters-ի համապատասխան էջը փոխարինվել է կամ անհասանելի է, Կառավարիչն իրավասու է որոշել այլ էջ կամ աղբյուր, որտեղ կսահմանվի ԼԻԲՈՐ-ի դրույքաչափը:

ժա) ՄՖԿ՝ միջպետական համաձայնագրերի հիման վրա միջազգային իրավունքին համապատասխան ստեղծված եւ միջազգային իրավասութեկտություն ունեցող միջազգային ֆինանսական կազմակերպություններ:

ժբ) Հիմնադրամի մասին հիմնադրույթ՝ «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի մասին» հիմնադրույթ, որը «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրի անբաժանելի մասն է կազմում:

ժգ) Ստացող՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կողմ հանդիսացող՝ Հիմնադրամի մասնակից պետություն, որին տրամադրվում են Ֆինանսական վարկի միջոցները:

ժդ) Պահման իրավունք՝ հիփոթեք, գրավ, ինչպես նաեւ Պետական ակտիվների նկատմամբ այլ ծանրաբեռնումներ, ցանկացած տեսակի արտոնություններ եւ առաջնահերթություններ:

ժե) Ծրագիր՝ որպես Ֆինանսական վարկի տրամադրման պարտադիր պայման՝ Ստացողի կողմից պետական մակարդակով ընդունված հակաճգնաժամային/կայունացնող միջոցառումների ծրագիր:

ժզ) Տոկոսային ժամանակահատված՝ տոկոսների հաշվեգրման ժամանակահատված, ընդ որում՝ առաջին տոկոսային ժամանակահատվածն սկսվում է Ֆինանսական վարկի կամ Ֆինանսական վարկի մասի հատկացման ամսաթվին՝ ներառելով այն, եւ ավարտվում է մոտակա Վճարման ամսաթվին՝ չներառելով այն: Հաջորդող տոկոսային ժամանակահատվածներն սկսվում են նախորդ տոկոսային ժամանակահատվածի համար Վճարման ամսաթվին՝

ներառելով այն, եւ ավարտվում են հաջորդ Վճարման ամսաթվին՝ չներառելով այն: Վերջին տոկոսային ժամանակահատվածն ավարտվում է Ֆինանսական վարկի օտագործման ժամկետի ավարտի ամսաթվին՝ չներառելով այն:

Ժէ) Աշխատանքային օր՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով Ստացողի կողմից վճարումների կատարման դեպքերի համար նշանակում է Ստացողի, Ղազախստանի Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների (եթե Վարկի արժույթը ԱՄՆ դոլարն է) եւ (կամ) Եվրոպայի (եթե Վարկի արժույթը եվրոն է) օրենսդրությանը համապատասխան աշխատանքային օր, երբ տվյալ երկրներում առետրային բանկերը բաց են բանկային գործառնությունների համար (բացի տվյալ պետությունների օրենսդրությամբ սահմանված հանգստյան օրերից եւ պաշտոնապես ոչ աշխատանքային օրերից):

Ժը) «Հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագիր՝ «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագիր, որն ստորագրվել է Կառավարչի եւ Հիմնադրամի հիմնադիրների/Մասնակիցների միջեւ՝ «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրին եւ «Հիմնադրամի մասին» հիմնադրույթին համապատասխան:

Ժթ) «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագիր՝ Աստանա քաղաքում Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ ստորագրված «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» 2006 թվականի հունվարի 12-ի համաձայնագիր:

ի) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիր՝ Կառավարչի, որը գործում է Հիմնադրամի մասնակիցների անունից եւ հանձնարարությամբ, եւ Ստացողի միջեւ համաձայնագիր, որի առարկան Հիմնադրամի միջոցներից Ֆինանսական վարկի տրամադրումն է: «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը ներառում է

բոլոր փոփոխությունները (լրացումները), որոնք, սահմանված կարգին համապատասխան, կատարվել են այդ համաձայնագրում, ինչպես նաև դրա բոլոր հավելվածները եւ փաստաթղթերը, որոնց կատարված հղումները պարունակվում են այդ համաձայնագրի տեքստում:

իա) Հաշիվ՝ նշանակում է Ստացողի կողմից իր երկրի ազգային (կենտրոնական) բանկում բացված, «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված Վարկի արժույթով հատուկ հաշիվ, որին փոխանցվում է Ֆինանսական վարկի գումարը:

իբ) Հիմնադրամի մասնակիցներ՝ պետություններ եւ միջազգային կազմակերպություններ, որոնք Հիմնադրամի մասնակիցներն են «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրին եւ «Հիմնադրամի մասին» հիմնադրույթին համապատասխան:

իգ) Կառավարիչ՝ Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» 2006 թվականի հունվարի 12-ի համաձայնագրին համապատասխան ստեղծված միջազգային կազմակերպություն հանդիսացող Եվրասիական զարգացման բանկը, որը գործում է որպես Հիմնադրամի միջոցների Կառավարիչ՝ «Հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագրի հիման վրա, կամ «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրին եւ «Հիմնադրամի մասին» հիմնադրույթին համապատասխան Հիմնադրամի մասնակիցների կողմից որոշված այլ կազմակերպություն:

իդ) Ֆինանսական վարկ՝ վարկ, որը Հիմնադրամի միջոցներից Ստացողին է տրամադրվել ժամկետայնության, վճարելիության եւ վերադարձելիության հիմունքներով՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի հիման վրա, այդ համաձայնագրով սահմանված կարգով եւ պայմաններով:

իե) Հիմնադրամ՝ Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամ, որը «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրի հիման վրա ստեղծվել է

որպես «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրով սահմանված նպատակներով ֆինանսական ռեսուրսների ներգրավման, կուտակման եւ օգտագործման գործիք:

Ստանդարտ պայմաններում գործածվող մնացած բոլոր եզրույթները եւ սահմանումներն ունեն նույն իմաստը, ինչ «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրում, «Հիմնադրամի մասին» հիմնադրույթում եւ Հիմնադրամի խորհրդի կողմից հաստատված՝ «Հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկերի տրամադրման կարգում»:

Որոշ եզրույթների նշանակությունը սահմանվում է Ստանդարտ պայմանների համատեքստում:

Բաժին 1.04. *Հղումները եւ վերնագրերը:*

Հոդվածներին, բաժիններին եւ կետերին արված՝ Ստանդարտ պայմաններում առկա հղումները Ստանդարտ պայմանների հոդվածներին, բաժիններին եւ կետերին արված հղումներ են: Հոդվածների եւ բաժինների վերնագրերը, ինչպես նաեւ բովանդակությունը Ստանդարտ պայմաններում ներառվել են տեղեկատվական նպատակներով եւ հաշվի չեն առնվում Ստանդարտ պայմանների մեկնաբանման ժամանակ:

II. Ֆինանսական վարկի միջոցների հատկացումը

Բաժին 2.01. *Ֆինանսական վարկի միջոցների հատկացումը: Միջոցների հատկացման հայտերը:*

ա) Կառավարիչը ֆինանսական վարկի միջոցները հատկացնում է Ստացողի կողմից Կառավարչին ներկայացվող Ստացողի հարցման հիման վրա, որը պարունակում է հետեւյալ փաստաթղթերը (այսուհետ՝ Միջոցների հատկացման հայտ)՝

- Կառավարչի կողմից սահմանված ձեռնարկ կազմված՝ Ստացողի գրավոր հայտը

- Ստացողի անունից միջոցների հատկացման համար Հայտի ստորագրման համար լիազորված անձի կամ անձանց լիազորությունների՝ Կառավարչին բավարարող ապացույցները, ինչպես նաև յուրաքանչյուր այդպիսի անձի ստորագրության՝ հաստատված նմուշը.

- Միջոցների հատկացման հայտի հիմնավորվածությունը հաստատող այլ փաստաթղթեր, որոնք հիմնավորված կերպով Կառավարչի կողմից կարող են պահանջվել ինչպես այդ Հայտով միջոցների դուրսբերումից առաջ, այնպես էլ դրանից հետո:

Միջոցների հատկացման հայտը կազմվում է ստորագրվում է Ստացողի անունից՝ Ստացողի լիազորված անձի կողմից:

Միջոցների հատկացումն իրականացվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում այլ՝ ավելի երկար ժամկետ նշված չէ, Կառավարչին բավարարող՝ Միջոցների հատկացման հայտն ստանալուց եւ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նախատեսված բոլոր նախնական պայմանները կատարելուց հետո:

բ) Սույն բաժնի «ա» կետում նշված փաստաթղթերից յուրաքանչյուրի ձեռք եւ բովանդակությունը պետք է բավարար լինեն, որպեսզի Կառավարիչը կարողանա համոզվել, որ՝

- Ստացողն իրավունք ունի ստանալու այն գումարը, որը նա նշել է Միջոցների հատկացման հայտում.

- Միջոցների հատկացման հայտում նշված գումարը Ստացողի կողմից օգտագործվելու է բացառապես «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված նպատակներով:

գ) Կառավարիչը Միջոցների հատկացման հայտերի հիման վրա Ֆինանսական վարկի գումարները վճարում է բացառապես Ստացողին՝ Կառավարչի կողմից սահմանված միջոցների ծախսման ընթացակարգերին համապատասխան:

Բաժին 2.02. *«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ընդունելի ծախսերը*

Ստացողը Ֆինանսական վարկի միջոցներն օգտագործում է բացառապես «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված ծախսերի ֆինանսավորման համար (այսուհետ՝ **Ընդունելի ծախսեր**):

Եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի նպատակներով Ընդունելի ծախսեր են այն վճարումները, որոնք մուտքագրվում են Ստացողի Հաշվին եւ նրա կողմից օգտագործվում են պետական բյուջեի՝ Ստացողի օրենսդրությանը համապատասխան իրականացվող ցանկացած ծախսի դիմաց վճարման հաշվին:

Բաժին 2.03. *Ֆինանսական վարկի հատկացման արժույթը:*

Ֆինանսական վարկի ցանկացած գումարի հատկացումն իրականացվում է Վարկի արժույթով:

Բաժին 2.04. *Հաշվառման վարումը:*

Կառավարիչը վարում է Ֆինանսական վարկի միջոցների հետ գործառնությունների առանձին հաշվառում՝ Վարկի արժույթով:

Բաժին 2.05. *Արժույթների արժեքի գնահատումը:*

Այն դեպքում, երբ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» որեւէ

համաձայնագրի նպատակներով առաջանում է մեկ արժույթի արժեքն այլ արժույթով արտահայտելու անհրաժեշտություն, այդ արժեքը հիմնավորված սահմանվում է Կառավարչի կողմից:

III. Ֆինանսական վարկի սպասարկումը եւ մարումը

Բաժին 3.01. Ֆինանսական վարկի գծով վճարումները:

Ստացողը Ֆինանսական վարկի սպասարկման եւ մարման հաշվին գումարներ է (այսուհետ՝ **Վարկի գծով վճարումներ**) վճարում Կառավարչին՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի դրույթներին համապատասխան, այդ թվում՝

ա) Ֆինանսական վարկի դուրս բերված եւ չմարված գումարի վրա հաշվեգրվող տոկոսները (այսուհետ՝ **Տոկոսներ**)՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված դրույքաչափով: Տոկոսները հաշվեգրվում են՝ սկսած Ֆինանսական վարկի միջոցների հատկացման համապատասխան ամսաթվերից՝ ներառելով դրանք, մինչեւ մարման ամսաթվերը՝ չներառելով դրանք, եւ վճարվում են յուրաքանչյուր անցած Տոկոսային ժամանակահատվածի համար՝ յուրաքանչյուր Վճարման ամսաթվին: Հաշվարկի համար հիմք է ընդունվել տարվա մեջ 360 (երեք հարյուր վաթսուն) օրը

բ) Ֆինանսական վարկի չօգտագործված գումարի վրա հաշվեգրվող միջնորդավճարը (այսուհետ՝ **Պահուստավորման համար միջնորդավճար**)՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված դրույքաչափով: Պահուստավորման համար միջնորդավճարը հաշվեգրվում է՝ սկսած այն ամսաթվից, որը վրա է հասնում «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի ստորագրման ամսաթվից 60 (վաթսուն) օր հետո՝ ներառելով այն, մինչեւ Ֆինանսական վարկի համապատասխան գումարների

հատկացման կամ այդ գումարների զրոյացման ամսաթվերը՝ չներառելով դրանք: Պահուստավորման համար միջնորդավճարը վճարվում է Վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած Վճարման մոտակա ամսաթվից, որը վրա է հասել Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո, եւ վերջացրած Վճարման մոտակա ամսաթվով, որը վրա է հասել Ֆինանսական վարկի գումարի ամբողջական (առանց մնացորդի) օգտագործումից կամ զրոյացումից հետո: Հաշվարկի համար հիմք է ընդունվել տարվա մեջ 360 (երեք հարյուր վաթսուն) օրը:

գ) Ֆինանսական վարկի հատկացված եւ չմարված գումարը (այսուհետ՝ **Հիմնական պարտք**)՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան:

դ) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով եւ Ստանդարտ պայմաններով նախատեսված այլ վճարումներ՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համապատասխան համաձայնագրով սահմանված կարգով եւ պայմաններով:

Եթե «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նախատեսված են Վարկի որեւէ վճարման փոփոխական դրույքաչափեր, ապա Կառավարիչը Ստացողին գրավոր տեղեկացնում է հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար այդ դրույքաչափերի մասին՝ դրանք սահմանելուց անմիջապես հետո:

Բաժին 3.02. Հիմնական պարտքի վաղաժամկետ մարումը:

ա) **Սույն բաժնի «բ» կետում** նշված պայմանները պահպանելու դեպքում Ստացողն իրավունք ունի վաղաժամկետ վերադարձնելու Հիմնական պարտքի հետեւյալ գումարները՝

- վաղաժամկետ մարման օրվա դրությամբ առկա՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված Հիմնական պարտքի

ամբողջ գումարը.

- Հիմնական պարտքի մարման մեկ կամ մի քանի ամսաթվերին վերադարձման ենթակա՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված Հիմնական պարտքի գումարները՝ Ֆինանսական վարկի մարման ժամկետներին հակառակ հերթականությամբ, երբ մարման ամենաուշ ժամկետով Հիմնական պարտքի գումարը ենթակա է մարման առաջին հերթին:

բ) **Սույն բաժնի «ա» կետում** թվարկված գումարները վաղաժամկետ վերադարձնելու համար անհրաժեշտ է հետեւյալ պայմանների պահպանումը՝

- Ստացողը վաղաժամկետ մարում իրականացնելու իր մտադրության մասին Կառավարչին գրավոր ծանուցում է ուղարկել վաղաժամկետ մարման ենթադրվող ամսաթվից առնվազն քառասունհինգ օր առաջ, եւ այդ ամսաթիվը Կառավարչի համար ընդունելի է.

- վաղաժամկետ մարման ամսաթվի դրությամբ Ստացողը վճարել է Վարկի գծով՝ այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա բոլոր վճարումները:

Բաժին 3.03. Վարկի գծով մասնակի վճարումը:

Եթե Կառավարիչն ստանա գումար, որը պակաս է, քան դա ստանալու պահի դրությամբ Ստացողի կողմից վճարման ենթակա՝ Վարկի գծով վճարման ամբողջ գումարը, ապա Կառավարիչը նշված գումարը հաշվում է Վարկի գծով վճարումների մարման հաշվին՝ հետեւյալ հերթականությամբ՝

ա) առաջին հերթին՝ Համաձայնագրով վճարման ենթակա Կառավարչի ծախսումների եւ ծախսերի փոխհատուցման համար.

բ) երկրորդ հերթին՝ տուժանքի (տույժի, տուգանքների) վճարման համար.

գ) երրորդ հերթին՝ Տոկոսների եւ Պահուստավորման համար միջնորդավճարի վճարման համար.

դ) չորրորդ հերթին՝ Հիմնական պարտքի մարման համար:

Բաժին 3.04. Վարկի գծով վճարումներ կատարելու ժամկետները:

Վարկի գծով բոլոր վճարումները ենթակա են վճարման «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով սահմանված ժամկետներում:

Վարկի գծով վճարումների կատարման մասով ստացողի պարտավորությունների կատարման ամսաթիվը Կառավարչի հաշվին դրամական միջոցների մուտքագրման ամսաթիվն է:

Վարկի գծով վճարումներ կատարելու համար Կառավարչի հաշվի վավերապայմանները նշվում են «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում: Նշված վավերապայմանների փոփոխության դեպքում Կառավարիչը Ստացողին միակողմանիորեն ծանուցում է այդ փոփոխության մասին՝ **Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնի «գ»** կետին համապատասխան: Վավերապայմանների փոփոխությունն Ստացողի համար ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցումն ստանալու ամսաթվից կամ Կառավարչի ծանուցման մեջ նշված այլ՝ ավելի ուշ ամսաթվից:

Եթե այն օրը, երբ Ստացողը, ըստ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի, Կառավարչին պետք է վճարում կատարի, աշխատանքային օր չէ, վճարումը Ստացողի կողմից պետք է կատարվի դրան հաջորդող մոտակա աշխատանքային օրը:

Բաժին 3.05. Վարկի գծով վճարման արժույթը:

Վարկի գծով բոլոր վճարումները Ստացողը կատարում է Վարկի արժույթով:

Բաժին 3.06. Վարկի գծով վճարման եղանակը:

ա) Վարկի գծով ցանկացած վճարում, որը պետք է փոխանցվի Կառավարչի հաշվին «Ֆինանսական վարկի տրամադրման մասին»

համաձայնագրում նշված երկրի արժույթով, իրականացվում է այնպիսի եղանակով եւ այնպիսի եղանակով ձեռք բերված արժույթով, որոնք այդ երկրի օրենսդրությամբ թույլատրվում են այդպիսի վճարում կատարելու եւ Կառավարչի՝ այդ արժույթով ավանդներ ընդունելու համար լիազորված ավանդապահներից մեկի մոտ Կառավարչի հաշվին այդպիսի արժույթի ավանդադրման համար

բ) Վարկի գծով բոլոր վճարումները կատարվում են առանց Ստացողի օրենսդրությամբ կամ նրա տարածքում սահմանված որեւէ սահմանափակման եւ առանց Ստացողի կողմից կամ նրա տարածքում գանձվող որեւէ հարկի պակասեցման եւ հաշվեգրման

գ) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի վրա չեն տարածվում այնպիսի հարկեր, որոնք Ստացողի կողմից կամ նրա տարածքում գանձվում են «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կնքման, հանձնման կամ գրանցման արդյունքում կամ դրա հետ կապված

դ) Վարկի գծով բոլոր վճարումներն Ստացողի կողմից կատարվում են առանց Ստացողի կողմից հակընդդեմ պահանջների հաշվանցման, ցանկացած տեսակի պակասեցումների կամ պահումների իրավունքի: Կառավարիչն իրավունք ունի Ստացողի հետ վերջնահաշվարկների ժամանակ կատարելու փոխադարձ հակընդդեմ պահանջների հաշվանցում:

ե) Եթե Ստացողն այդ վճարումը պետք է կատարի հարկերի, թղթակցային բանկերի միջնորդավճարների դիմաց պակասեցումներով կամ պահումներով, կամ այլ հիմունքներով, ապա Ստացողի կողմից վճարվող գումարը պետք է ավելացվի այնքան, որ անհրաժեշտ պակասեցումից կամ պահումից հետո Կառավարիչն ստանա այն գումարին հավասար գումար, որը նա կստանար, եթե այդ պակասեցումները կամ պահումները չարվեին կամ չպահանջվեին:

IV. Ծրագրի կատարումը:

Բաժին 4.01. *Ծրագրի կատարումը:*

Ստացողն ապահովում է՝

ա) Ծրագրի իրագործումը.

- անհրաժեշտ բարեխղճությամբ եւ արդյունավետությամբ,
- պատշաճ վարչական, տեխնիկական, ֆինանսական, բնապահպանական եւ սոցիալական նորմերին ու գործելակերպին համապատասխան,
- «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի եւ սույն Ստանդարտ պայմանների դրույթներին համապատասխան:

բ) Ծրագրի ֆինանսավորման համար դրամական միջոցների, ինչպես նաեւ Ծրագրի արդյունավետ իրագործման համար պահանջվող տեխնիկական միջոցների, սարքավորումների, ծառայությունների եւ այլ ռեսուրսների ժամանակին տրամադրումը՝ Ծրագրի արդյունավետ իրագործումն ապահովող ժամկետներում:

Բաժին 4.02. Ծրագրի մոնիթորինգը եւ գնահատումը:

Ստացողն ապահովում է՝

ա) Ծրագրի իրագործման ընթացքի եւ դրա նպատակների ապահովման մշտական մոնիթորինգ եւ գնահատում՝ Կառավարչի համար ընդունելի ցուցիչների կիրառմամբ.

բ) իրենց ձեռով եւ բովանդակությամբ Կառավարչին բավարարող պարբերական հաշվետվություններ կազմելը՝ այդ մոնիթորինգի եւ գնահատման արդյունքների ամփոփմամբ եւ Ծրագրի հետագա արդյունավետ ու հաջող կատարման եւ դրա նպատակների ապահովման համար առաջարկվող միջոցառումների շարադրմամբ.

գ) **սույն բաժնի (բ) կետում** նշված հաշվետվություններից յուրաքանչյուրը՝ ըստ պատրաստ լինելու, օպերատիվ կերպով Կառավարչին ներկայացնելը, Կառավարչին այդ հաշվետվությունների վերաբերյալ Ստացողի հետ կարծիքներ փոխանակելու հնարավորություն տրամադրելը, ինչպես նաեւ Կառավարչի կողմից առաջարկված միջոցառումներն իրականացնելը՝ կոնկրետ հարցերի վերաբերյալ Կառավարչի դիրքորոշումը հաշվի առնելով.

դ) վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից հետո վեց ամսից ոչ ուշ կամ ավելի վաղ ժամկետին մոտ, որն այդ նպատակով կարող է նախատեսվել «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով, այն հաշվետվությունները կազմելը եւ Կառավարչին ուղարկելը, որոնք առնչվում են Ծրագրի իրագործմանը, Ստացողի կողմից «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարմանը եւ Ծրագրի նպատակների ապահովմանը՝ Կառավարչի կողմից հիմնավորված կերպով պահանջված ծավալով ու մանրամասնությամբ, ինչպես նաեւ Ծրագրի արդյունքների կայունության ապահովմանն ուղղված գործողությունների պլանը:

Բաժին 4.03. *Կառավարչի եւ Ստացողի միջեւ փոխգործակցությունը:*

Ստացողը եւ Կառավարիչը սերտորեն համագործակցում են Ծրագրի նպատակների ու խնդիրների իրագործումը, ինչպես նաեւ Ծրագրի միջոցառումների ժամանակին եւ արդյունավետ կատարումն ապահովելու համար, այդ թվում՝

ա) ըստ անհրաժեշտության՝ կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ փոխանակում են կարծիքներ Ծրագրի իրականացման հետ կապված հարցերի ու «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ստանձնած իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ եւ մյուս կողմին ներկայացնում են այդ հարցերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, որն այդ կողմը կարող է հիմնավորված կերպով պահանջել.

բ) անհապաղ տեղեկացնում են միմյանց այնպիսի իրավիճակների մասին, որոնք խոչընդոտում են կամ կարող են խոչընդոտել այդ հարցերի իրագործմանը:

Բաժին 4.04. *Ծրագրի ստուգումը Ստացողի տարածքում:*

Ստացողը Կառավարչի ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռում՝

ա) այցելել Ստացողի տարածքի ցանկացած մաս՝ Ծրագրի իրագործման հետ կապված կամ Ֆինանսական վարկին առնչվող նպատակներով.

բ) ստանալ եւ ստուգել Ստացողի կողմից «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման հետ կապված հաշվառման փաստաթղթերը:

V. Տեղեկատվության տրամադրումը:

Բաժին 5.01. Ֆինանսական եւ տնտեսական տվյալները:

Ստացողը «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Կառավարչի հարցմամբ վերջինիս է ներկայացնում՝

ա) իր տարածքում ֆինանսական եւ տնտեսական պայմանների մասին Կառավարչի կողմից հիմնավորված կերպով պահանջվող ամբողջ տեղեկատվությունը՝ ներառելով իր վճարային հաշվեկշռի եւ պետական պարտքի մասին տեղեկատվությունը, սակայն չսահմանափակվելով դրանով.

բ) նմանատիպ տեղեկատվություն՝ իր սուբյեկտների, քաղաքական եւ վարչական մարմինների, հաստատությունների եւ ցանկացած կազմակերպության մասին, որոնք՝

- պատկանում են Ստացողին.
- վերահսկվում են Ստացողի կողմից.
- գործում են Ստացողի անունից՝ վերջինիս շահերից ելնելով.
- գործում են ցանկացած այդպիսի մարմնի կամ հաստատության անունից եւ դրանց շահերից ելնելով.
- իրականացնում են կենտրոնական (ազգային) բանկի կամ Ստացողի արժույթի կայունացման հիմնադրամի գործառույթներ կամ համանման գործառույթներ:

VI. Ֆինանսական վարկի ապահովումը

Բաժին 6.01. *Ֆինանսական վարկի ապահովումը:*

ա) Ստացողը պարտավորվում է ապահովել, որ իր Արտաքին պարտքը Ստացողի ակտիվների հատկացման, իրացման կամ բաշխման մասով առաջնահերթություն չունենա Հիմնադրամի միջոցների հաշվին ստացած Ֆինանսական վարկերի գծով առկա պարտքի նկատմամբ.

բ) եթե Ստացողի Արտաքին պարտքի մասով որեւէ պարտատիրոջ մոտ ծագում է Ստացողի Պետական ակտիվների առնչությամբ Պահման իրավունք, որով նախատեսվում է Պետական ակտիվների հաշվին այդ պարտատիրոջ պահանջները Կառավարչի պահանջների համեմատ առաջնահերթ կարգով բավարարելը, ապա Կառավարչի կողմից Ստանդարտ պայմանների 10.01 բաժնով նախատեսված կարգով այլ բանի չհամաձայնվելու դեպքում այդ Պահման իրավունքը, հենց դրա առաջացման փաստով պայմանավորված եւ առանց Կառավարչի ու Հիմնադրամի կողմից լրացուցիչ ծախքերի, հավասարապես եւ համաչափորեն ճանաչվում է Վարկի գծով բոլոր վճարումների ապահովում.

գ) ցանկացած չնախատեսված ծախս եւ միջնորդավճար, որոնք կարող են առաջանալ Ֆինանսական վարկի միջոցները Ստացողին փոխանցելու, Հիմնական պարտքը վերադարձնելու եւ Կառավարչին վարձատրություն տրամադրելու հետ կապված, փոխհատուցվում են Ստացողի կողմից ամբողջությամբ՝ ինքնուրույն.

դ) Կառավարչի միջոցները եւ գույքը, այդ թվում եւ Ֆինանսական վարկի գումարը, զերծ են Ստացողի տարածքում ամեն տեսակի սահմանափակումներից, կարգադրագրերից եւ մորատորիումներից:

VII. Զրոյացումը: Կասեցումը: Վաղաժամկետ մարման պահանջը:

Բաժին 7.01. *Ֆինանսական վարկի գումարների զրոյացումն Ստացողի կողմից:*

Ստացողն իրավունք ունի Կառավարչին ծանուցում ուղարկելով զրոյացնելու Ֆինանսական վարկի ցանկացած չօգտագործված գումար:

Եթե նշված ծանուցումը Կառավարիչն ստացել է Ստացողի կողմից այն ուղարկելու ամսաթվից հետո մեկ օրացուցային ամսվա ընթացքում, ապա դրանում նշված գումարի զրոյացման ամսաթիվ է Ստացողի կողմից ծանուցումն ուղարկելու ամսաթիվը:

Եթե նշված ծանուցումը Կառավարիչն ստացել է Ստացողի կողմից այն ուղարկելու ամսաթվից հետո մեկ օրացուցային ամիսը լրանալուն պես, ապա դրանում նշված գումարի զրոյացման ամսաթիվ է համարվում Կառավարչի կողմից Ստացողին զրոյացման գրավոր հաստատումն ուղարկելու ամսաթիվը:

Բաժին 7.02. *Ստացողի՝ Ֆինանսական վարկի միջոցների ստացման իրավունքի կասեցումը:*

Եթե տեղի ունենա եւ շարունակվի ստորեւ թվարկված իրադարձություններից որեւէ մեկը, ապա Կառավարիչն իրավունք ունի Ստացողին ծանուցում ուղարկելով ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու Ստացողի՝ Ֆինանսական վարկի միջոցների ստացման իրավունքը: Այդ կասեցումը կգործի Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու ամսաթվից այնքան ժամանակ, մինչեւ կվերացվեն կասեցմանը հանգեցրած պատճառները, եթե Կառավարիչն Ստացողին չծանուցի մինչեւ կասեցման պատճառների վերացումը՝ միջոցների հատկացման իրավունքի վերականգնման մասին:

ա) Ստացողը «Ֆինանսական վարկի տրամադրման մասին»

համաձայնագրով սահմանված ժամկետում չի կատարել Վարկի գծով որեւէ վճարում՝ ամբողջությամբ կամ մասամբ

բ) Ստացողը չի կատարել կամ չի ապահովել «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրով, «Հիմնադրամի մասին» հիմնադրույթով, «Հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագրով, ինչպես նաեւ իր հետ կնքված՝ հիմնադրամի միջոցների տրամադրման մասին ցանկացած համաձայնագրով նախատեսված իր որեւէ պարտավորության կատարումը

գ) Ստացողը չի կատարել հիմնական պարտքի, տոկոսների կամ Հիմնադրամի մասնակից պետությանը, Կառավարչին կամ ՄՖԿ-ին հասանելիք ցանկացած այլ գումարի մարման գծով վճարումը՝ Ստացողի եւ Հիմնադրամի այդ մասնակից պետության, Կառավարչի կամ ՄՖԿ-ի միջեւ համապատասխան համաձայնագրով սահմանված ժամկետում

դ) այն իրավաբանական անձը, որի բաժնետերը կամ մասնակիցն է Ստացողը, չի կատարել հիմնական պարտքի, տոկոսների կամ Կառավարչին հասանելիք ցանկացած այլ գումարի մարման գծով վճարումը՝ այդ իրավաբանական անձի եւ Կառավարչի միջեւ համապատասխան համաձայնագրով սահմանված ժամկետում

ե) ծագել է արտակարգ իրավիճակ, որի պատճառով քիչ հավանական է դառնում այն, որ կողմերից որեւէ մեկը կկարողանա կատարել «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները

զ) Ստացողի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի առնչությամբ ներկայացված ցանկացած տեղեկատվություն կամ հաշվետվություն էական առումով հավաստի չէ

է) Ստացողը, առանց Կառավարչի համաձայնության, ամբողջությամբ կամ մասամբ վերազիջել է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններից որեւէ մեկը

ը) Ստացողը դադարել է Հիմնադրամի մասնակից լինելուց

թ) տեղի է ունեցել սույն բաժնի նպատակներով «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված ցանկացած այլ իրադարձություն:

Բաժին 7.03. *Ստացողի՝ Ֆինանսական վարկի միջոցներն ստանալու իրավունքի չեղարկումը:*

Եթե տեղի ունենա եւ շարունակվի ստորեւ թվարկված իրադարձություններից որեւէ մեկը, ապա Կառավարիչն իրավունք ունի Ստացողին ծանուցում ուղարկելով վերացնելու Ստացողի՝ Ֆինանսական վարկի ազատ միջոցների որեւէ մաս ստանալու իրավունքը: Այդ ծանուցումն ուղարկելու ամսաթիվը դրանում նշված գումարի գրոյացման ամսաթիվն է:

ա) Ստացողի՝ միջոցներն ստանալու իրավունքը կասեցված է եղել որեւէ գումարի առնչությամբ ավելի, քան երեսուն օր անընդմեջ

բ) Կառավարիչն Ստացողի հետ խորհրդակցելով որոշում է ընդունել այն մասին, որ Ֆինանսական վարկի որեւէ չօգտագործված գումար չի պահանջվի Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար

գ) Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը վրա հասնելուց հետո չօգտագործված մնացորդ է մնում: Ֆինանսական վարկի այդ չօգտագործված մնացորդն ավտոմատ կերպով գրոյացվում է Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից՝ առանց Կառավարչի կողմից որեւէ ծանուցում ուղարկելու

դ) Տեղի է ունեցել սույն բաժնի նպատակներով «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված ցանկացած այլ իրադարձություն:

Բաժին 7.04. *Հիմնական պարտքի մարման ժամանակացույցի փոփոխումը զրոյացման դեպքում:*

Եթե Կառավարիչը եւ Ստացողը չպայմանավորվեն այլ բանի շուրջ, ապա զրոյացման հետեւանքով Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքի մարման նոր ժամանակացույց սահմանելիս Ֆինանսական վարկի ցանկացած զրոյացված գումար համաչափորեն հանվում է Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքի գումարից մարման այն ժամկետներով, որոնք վրա են հասնում այդ զրոյացման ամսաթվից հետո: Այլ պայմանավորվածություն ձեւակերպվում է Ստացողի հարցմամբ Կառավարչի կողմից ծանուցում ուղարկելու միջոցով՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնի (գ) կետին համապատասխան, եւ ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման մեջ նշված ամսաթվից:

Բաժին 7.05. *Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքը վաղաժամկետ մարելու մասին պահանջ ներկայացնելը:*

Ստացողին գրավոր ծանուցում ուղարկելուց հետո Կառավարիչն իրավունք ունի վաղաժամկետ մարման համար ներկայացնելու Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքի ամբողջ գումարը կամ դրա մի մասը՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին կամ սույն Ստանդարտ պայմաններին համապատասխան վճարման ենթակա Վարկի գծով այլ վճարումների հետ միասին, հետեւյալ դեպքերում՝

ա) եթե տեղի է ունեցել Ստանդարտ պայմանների 7.02 բաժնում

թվարկված իրադարձություններից որեւէ մեկը եւ դա շարունակվում է Կառավարչի կողմից համապատասխան ծանուցումը Ստացողին ուղարկելու ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում, եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ.

բ) տեղի է ունեցել սույն բաժնի նպատակներով «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված ցանկացած այլ իրադարձություն, եւ այդ իրադարձությունը շարունակվում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված ժամանակահատվածի ընթացքում (դրա առկայության դեպքում):

Կառավարչի՝ վաղաժամկետ մարման մասին ծանուցումն ստանալուց հետո դրա մեջ նշված Հիմնական պարտքի եւ Վարկի գծով այլ վճարումների գումարները ենթակա են Ստացողի կողմից անհապաղ վճարման:

Բաժին 7.06. *Վարկի գծով վճարումների մարման ուշացման համար տուժանքը:*

«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին համապատասխան՝ Բանկին հասանելիք՝ Վարկի գծով վճարումների մարման պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում Ստացողը Կառավարչին է վճարում մարման ուշացման համար տուժանք՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված չափով: Տուժանքը հաշվարկվում է ուշացման յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց պարտավորության ամբողջ գումարի չափով՝ այն ամսաթվին հաջորդող օրվանից, երբ այդ վճարումը պետք է կատարվի, մինչեւ Ստացողի ժամկետանց պարտավորության գումարը Կառավարչի հաշվին մուտքագրելու ամսաթիվը:

Բաժին 7.07. *Ֆինանսական վարկի տրամադրման մասին*

*համաձայնագրերի գործողությունը վաղաժամկետ մարման մասին պահանջը
չեղարկելուց, կասեցնելուց կամ ներկայացնելուց հետո:*

Անկախ սույն հոդվածին համապատասխան վաղաժամկետ մարման մասին պահանջի ցանկացած չեղարկումից, կասեցումից կամ ներկայացումից՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի բոլոր դրույթները շարունակում են գործել ամբողջ ծավալով, եթե սույն Ստանդարտ պայմաններով կամ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով միանշանակորեն այլ բան չի նախատեսվում:

VIII. Պարտավորությունների հարկադիր կատարումը: Արբիտրաժը:

Բաժին 8.01. *Պարտավորությունների կատարմանը հարկադրելու
հնարավորությունը:*

ա) Ստացողի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորություններն իրավաբանական ուժ ունեն եւ ապահովված են հարկադիր կատարման հնարավորությամբ՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի, Ստանդարտ պայմանների եւ Հիմնադրամի փաստաթղթերի դրույթներին համապատասխան՝ անկախ Ստացողի օրենսդրության որեւէ դրույթից

բ) Ստացողն իրավունք չունի պնդելու, որ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի եւ սույն Ստանդարտ պայմանների որեւէ դրույթ իրավաբանական ուժ չունի կամ ենթակա չէ հարկադիր կատարման՝ Ստացողի օրենսդրության, Հիմնադրամի եւ (կամ) Կառավարչի փաստաթղթերի որեւէ դրույթի հիման վրա

գ) Ստացողը սույնով հաստատում եւ Կառավարչին հավաստիացնում է այն մասին, որ ինքը եւ իր գույքը չունեն որեւէ դատական անձեռնմխելիություն, հայցի ապահովման միջոցների մասով անձեռնմխելիություն, որոշման կամ

հրամանի հարկադիր կատարման մասով անձեռնմխելիություն, եւ սույնով Ստացողն առանց հետկանչի հրաժարվում է իր կամ իր գույքի մասով ցանկացած անձեռնմխելիությունից, որն ինքը կարող է ձեռք բերել՝ լինի դա հաշվանցման կամ դատական ընթացակարգերի մասով պետական կամ այլ անձեռնմխելիություն ցանկացած պետությունում՝ ներառյալ ցանկացած դատարանի կամ տրիբունալի մասով անձեռնմխելիությունը, ինչպես նաեւ նախնական ապահովման միջոցների կամ ապահովման այլ միջոցների կամ դատարանի որոշման կատարման մասով իր գույքի անձեռնմխելիությունը

դ) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում եւ (կամ) Ստանդարտ պայմաններում պարունակվող ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես հրաժարում, մերժում կամ փոփոխություն՝ այն անձեռնմխելիության, առավելությունների, արտոնությունների եւ պատասխանատվությունից ազատման առնչությամբ, որոնք Կառավարչին են տրամադրվել Կառավարչի ստեղծումն ու գործունեությունը կանոնակարգող միջազգային պայմանագրերին, միջազգային կիրառելի այլ պայմանագրերին եւ իրավունքին համապատասխան

ե) Կառավարչի դեմ հայցեր եւ գործեր կարող են հարուցվել միայն այն պայմանով, եթե Կառավարչից ստացվել է անձեռնմխելիությունից, առավելությունից կամ արտոնությունից հրաժարում, որը Կառավարիչն իրականացրել է այն չափով եւ պայմաններով, որոնք, իր կարծիքով, համապատասխանում են Կառավարչի շահերին: Անձեռնմխելիությունից, առավելությունից կամ արտոնությունից (դրանց որեւէ մասից) այդ հրաժարումը պետք է իրականացվի «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրով նախատեսված կարգով:

Բաժին 8.02. Իրավունքների իրականացման ուղացումները:

Կողմերից ցանկացածին հասանելի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման

մասին» համաձայնագրով նախատեսված որեւէ իրավունքի, լիազորության կամ իրավական պաշտպանության որեւէ միջոցի իրականացումն ուշացնելը կամ չիրականացնելը պարտավորությունների՝ ցանկացած չկատարման դեպքում չի նվազեցնում այդ իրավունքները, լիազորությունները կամ իրավական պաշտպանության միջոցները եւ չի համարվում դրանցից հրաժարում կամ պարտավորությունների չկատարման հետ լուռ համաձայնություն:

Պարտավորությունների՝ ցանկացած չկատարման մասով այդ կողմի ոչ մի գործողություն (անգործություն) չի առնչվում այդ կողմի իրավունքներին, լիազորություններին կամ իրավական պաշտպանության միջոցներին եւ չի նվազեցնում դրանք՝ պարտավորությունների՝ ցանկացած այլ կամ հետագա չկատարման առնչությամբ:

Բաժին 8.03. Արբիտրաժը:

ա) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կողմերի միջեւ ցանկացած տարաձայնություն կամ այդ կողմերից ցանկացածի՝ մյուս կողմին ներկայացված ցանկացած պահանջ, որը ծագել է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի առնչությամբ եւ ծագելու պահից առնվազն վեց ամսվա ընթացքում կողմերի միջեւ, ըստ պայմանավորվածության, չի կարգավորվել, վեճի կողմերից ցանկացածի կողմից փոխանցվում է Հիմնադրամի խորհրդի կարգավորմանը

բ) եթե սույն բաժնի «ա» կետին համապատասխան վեճը չի լուծվել Հիմնադրամի խորհրդի կողմից, ապա վեճի ցանկացած կողմ կարող է այն փոխանցել երեք արբիտրներից բաղկացած միջնորդ դատարանի քննությանը, որոնցից մեկը նշանակվում է Հիմնադրամի խորհրդի կողմից, մյուսը՝ Ստացողի, իսկ երրորդը՝ նշանակված արբիտրների համաձայնեցմամբ, կամ եթե արբիտրները նրանց նշանակումից հետո վեց ամսվա ընթացքում համաձայնության չգան՝ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային

դատարանի նախագահի կողմից: Երրորդ արբիտրին ընտրելիս ընտրված արբիտրներն առաջնորդվում են այն կանոնով, ըստ որի նա չպետք է լինի վեճի կողմ հանդիսացող պետության քաղաքացի կամ վեճի կողմ հանդիսացող միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

գ) վեճը կարգավորելիս արբիտրներն առաջնորդվում են ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի արբիտրաժային կանոնակարգով: Արբիտրաժային քննության լեզուն ռուսերենն է: Արբիտրաժային քննություն անցկացնելու վայրը Մոսկվա քաղաքն է

դ) անկախ ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի արբիտրաժային կանոնակարգի դրույթներից՝ արբիտրաժային դատարանն իրավասու չէ նախքան արբիտրաժային որոշում կայացնելը Կառավարչի նկատմամբ ընդունել պաշտպանության ժամանակավոր որեւէ միջոց կամ հայցի ապահովման որեւէ միջոց, եւ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կողմերից ոչ մեկը չի կարող Կառավարչի նկատմամբ նախքան արբիտրաժային որոշում կայացնելը պաշտպանության ժամանակավոր որեւէ միջոց կամ հայցի ապահովման որեւէ միջոց ընդունելու մասին միջնորդությամբ դիմել դատական որեւէ ատյանի

ե) Արբիտրաժային դատարանն իրավասու է քննել եւ ցանկացած վարույթի, որոշման կամ արբիտրաժային ցանկացած որոշման մեջ ներառել Կառավարչի կամ Ստացողի կողմից իր քննմանը պատշաճ կերպով փոխանցված ցանկացած վեճ կամ տարաձայնություն՝ այնքանով, որքանով այդ վեճը կամ տարաձայնությունը ծագում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրից: Ընդ որում, հաշվի առնելով սույն կետը՝ արբիտրաժային վարույթի մեջ չի ներգրավվում ոչ մի այլ կողմ, եւ այն չի միացվում որեւէ այլ կողմի մասնակցությամբ վարույթի հետ

զ) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի նպատակներով կիրառելի իրավունք է միջազգային հանրային իրավունքը, որի

աղբյուրները, սույն համաձայնագրի նպատակներով, ստորեւ նշվածներն են.

- «Հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագիրը, «Կառավարման մասին» համաձայնագիրը, «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագիրը, «Ստացողի տարածքում Կառավարչի գտնվելու պայմանների մասին» համաձայնագիրը (եթե կիրառելի է), ինչպես նաեւ այլ համաձայնագրեր եւ պայմանագրեր, որոնք կողմերի համար փոխադարձ իրավունքներ եւ պարտականություններ են ստեղծում.

- Ստացողի համար պարտադիր ուժ ունեցող միջազգային ցանկացած կոնվենցիայի եւ պայմանագրի դրույթներ, որոնք համընդհանուր ճանաչում ունեն՝ որպես սովորութային իրավունքի կոդիֆիկացնող պարտադիր նորմեր, համապատասխան կերպով կիրառելի են պետությունների եւ ՄՖԿ-ի նկատմամբ կամ հաստատված են որպես այդպիսի նորմեր.

- Կառավարչի համար պարտադիր ուժ ունեցող կամ չունեցող միջազգային ցանկացած կոնվենցիայի եւ պայմանագրի դրույթները, որոնք համընդհանուր ճանաչում ունեն՝ որպես սովորութային իրավունքի կոդիֆիկացնող պարտադիր նորմեր, համապատասխան կերպով կիրառելի են պետությունների եւ ՄՖԿ-ի նկատմամբ կամ հաստատված են որպես այդպիսի նորմեր.

- միջազգային սովորույթների այլ ձեւեր՝ ներառյալ պետությունների ու ՄՖԿ-ի այն գործելակերպը, որում առկա են իրավաբանական պարտավորությունների ստեղծման համար անհրաժեշտ համընդհանրությունը, հետեւողականությունը եւ շարունակականությունը.

- իրավունքի կիրառելի ընդհանուր սկզբունքները:

- «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով լրացուցիչ կարող են սահմանվել կիրառելի իրավունքի այլ աղբյուրներ:

է) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով դատարանի որոշումների հարկադիր կատարման մասով կիրառելի իրավունք է

միջազգային հանրային իրավունքը եւ դրան չհակասող մասով՝ Ստացողի օրենսդրությունը

ը) Արբիտրները որոշումն ընդունում են ձայների մեծամասնությամբ, եւ նրանց կողմից ընդունված որոշումը վեճի կողմերի համար վերջնական եւ պարտադիր է

թ) Եթե Արբիտրների որոշումը վեճի կողմերին հանձնելուց հետո երեսուն օրվա ընթացքում չի կատարվում, ապա վեճի կողմերից ցանկացածն իրավունք ունի՝

- դիմելու դատական որոշում կայացնելու համար կամ որոշման հարկադիր կատարման նպատակով երկրորդ մասնակցի նկատմամբ վարույթ հարուցելու համապատասխան իրավասության ցանկացած դատարանում.

- դատական հրամանի հիման վրա հարկադիր կատարելու այդ որոշումը.

- դիմելու երկրորդ մասնակցից իրավական պաշտպանության ցանկացած այլ ընդունելի միջոցի՝ արբիտրաժային որոշման եւ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի դրույթների հարկադիր կատարման նպատակով:

ժ) Սույն բաժնին համապատասխան որեւէ վարույթի կամ սույն բաժնին համապատասխան կայացված որեւէ որոշման հարկադիր կատարման նպատակով հարուցված ցանկացած վարույթի հետ կապված ցանկացած ծանուցում կամ դատարանի փաստաթղթեր հանձնելը պետք է իրականացվի սույն Ստանդարտ պայմանների 10.01 բաժնում նախատեսված կարգով: «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի կողմերը հրաժարվում են ցանկացած այդպիսի ծանուցում կամ դատարանի փաստաթուղթ հանձնելու եղանակներից:

IX. Ուժի մեջ մտնելը: Գործողության դադարումը

Բաժին 9.01. *Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ մտնելու պայմանները:*

Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ են մտնում միայն այն բանից հետո, երբ Կառավարիչն ստանա հետեւյալ պայմանների կատարման՝ իրեն բավարարող ապացույցները՝

- ա) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը՝
 - պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի բոլոր լիազորված մարմինների կողմից՝ նրա օրենսդրությամբ սահմանված կարգով,
 - ստորագրված է Ստացողի անունից՝ այն անձի կողմից, որն ունի պատշաճ կերպով ձեւակերպված լիազորություններ,
 - Ստացողի վավերական եւ իրավաբանական ուժ ունեցող պարտավորություն է, որը ենթակա է կատարման՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի պայմաններին համապատասխան.
- բ) սույն բաժնի նպատակներով կատարված է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նախատեսված ցանկացած այլ պայման:

Որպես ուժի մեջ մտնելու պայմանների կատարման հաստատում՝ Կառավարչին պետք է տրամադրվի վերջինիս բավարարող՝ այն իրավաբանի եզրակացությունը, որն ընդունելի է Կառավարչի համար, կամ Կառավարչի հետ համաձայնեցմամբ՝ վերջինիս բավարարող՝ Ստացողի իրավասու հաստատության եզրակացությունը, որով հավաստվում է, որ.

- «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը

պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից եւ նրա համար իրավաբանորեն պարտադիր է՝ սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան,

- սույն բաժնի նպատակներով՝ կատարված է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նախատեսված ցանկացած այլ պայման:

Բաժին 9.02. *Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:*

ա) բացառությամբ Կառավարչի եւ Ստացողի միջեւ այլ պայմանավորվածությունների՝ Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ են մտնում այն օրը, երբ Կառավարիչն Ստացողին է ուղարկում ծանուցում այն մասին, որ ինքն ընդունել է Ստանդարտ պայմանների 9.01 բաժնին համապատասխան անհրաժեշտ ապացույցները (այսուհետ՝ Ուժի մեջ մտնելու ամսաթիվ)

բ) եթե նախքան Ուժի մեջ մտնելու ամսաթիվը տեղի է ունեցել այնպիսի իրադարձություն, որի հիման վրա Կառավարիչը կարող էր կասեցնել Ստացողի՝ Ֆինանսական վարկի միջոցներ տրամադրելու իրավունքը, եթե Կառավարչի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ուժի մեջ լինեին, ապա Կառավարիչն իրավունք ունի հետաձգելու սույն բաժնի «ա» կետում նշված ծանուցման ուղարկումն այնքան ժամանակ, մինչեւ այդ իրադարձությունը (կամ իրադարձությունները) կամ իրավիճակը չդադարի:

Բաժին 9.03. «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի գործողության դադարումը՝ ուժի մեջ չմտնելու պատճառով:

«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի եւ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի շրջանակներում կողմերի բոլոր պարտավորությունների գործողությունը դադարում է, եթե «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրն ուժի մեջ չի մտել սույն բաժնի նպատակներով «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում սահմանված ժամկետում (այսուհետ՝ Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչը, ուսումնասիրելով ուշացման պատճառները, սահմանում է Ուժի մեջ մտնելու ավելի ուշ վերջնաժամկետ: Կառավարիչն Ստացողին անհապաղ ծանուցում է Ուժի մեջ մտնելու՝ այդ ավելի ուշ վերջնաժամկետի մասին՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան:

Բաժին 9.04. «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի գործողության դադարեցումը:

«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի եւ կողմերի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված բոլոր պարտավորությունների գործողությունն անհապաղ դադարում է Վարկի գծով Հիմնական պարտքը եւ մնացած բոլոր այն վճարումներն ամբողջությամբ կատարելուց հետո, որոնք, «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին համապատասխան, ենթակա են վճարման:

X. Այլ դրույթներ:

Բաժին 10.01. Ծանուցումները եւ հարցումները:

Ցանկացած ծանուցում կամ հարցում, որը պետք է կամ կարող է ուղարկվել «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին

համապատասխան կամ դրա կապակցությամբ, ձեւակերպվում է գրավոր: Այդ ծանուցումը կամ հարցումը համարվում է պատշաճ կերպով ուղարկված, եթե դա սուրհանդակի միջոցով կամ փոստով, տեlexտով կամ ֆաքսով (կամ եթե «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով թույլատրվում է՝ կապի էլեկտրոնային միջոցներով) առաքված է այն կողմին, որին դա պետք է ուղարկվի կամ կարող է ուղարկվել, այդ կողմի՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված հասցեին, կամ այլ հասցեի, որի մասին այդ կողմը տեղեկացրել է այդպիսի ծանուցում ուղարկող կամ այդպիսի հարցում կատարող կողմին: Ֆաքսով առաքումը հաստատվում է նաեւ փոստային առաքմամբ:

Բաժին 10.02. Ստացողի անունից գործողությունները:

ա) Սույն բաժնի նպատակներով «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» այն համաձայնագրի շրջանակներում Ստացողի կողմից նշանակված ներկայացուցիչը, որի կողմ է նա, կամ նշված նպատակների համար այդ ներկայացուցչի կողմից գրավոր լիազորված ցանկացած անձ կարող է կատարել ցանկացած այնպիսի գործողություն, որի կատարումն անհրաժեշտ կամ թույլատրված է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» այդ համաձայնագրին համապատասխան, եւ ձեւակերպել ցանկացած այնպիսի փաստաթուղթ, որի ձեւակերպումն անհրաժեշտ կամ թույլատրված է այդ Համաձայնագրին համապատասխան՝ Ստացողի անունից

բ) Ստացողի կողմից նշանակված ներկայացուցիչը կամ այդ ներկայացուցչի կողմից լիազորված անձն այդ ներկայացուցչի կամ լիազորված անձի կողմից ձեւակերպված գրավոր փաստաթղթի հիման վրա կարող է Ստացողի անունից համաձայնեցնել «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» այն համաձայնագրի դրույթների ցանկացած փոփոխություն, որի կողմ է

նա՝ պայմանով, որ այդ ներկայացուցչի կարծիքով այդ փոփոխությունը տվյալ պայմաններում հիմնավորված է եւ չի հանգեցնի «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի շրջանակներում Ստացողի պարտավորությունների էական ավելացմանը:

Բաժին 10.03. *Ստացողի ներկայացուցչի լիազորությունների հաստատումը:*

Ստացողը Կառավարչին է տրամադրում՝

ա) այն անձի կամ անձանց լիազորությունների բավարար ապացույցները, որոնք Ստացողի անունից կատարելու են ցանկացած այնպիսի գործողություն կամ ձեւակերպելու են ցանկացած այնպիսի փաստաթուղթ, որոնց կատարումը կամ ձեւակերպումը նա պահանջում կամ թույլատրում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին համապատասխան, որի կողմ է նա.

բ) սույն Ստանդարտ պայմանների 10.02 բաժինին համապատասխան՝ Ստացողի ներկայացուցչի կողմից լիազորված անձանց այն ստորագրությունների նմուշները, որոնք հաստատված են Ստացողի լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ:

Բաժին 10.04. *«Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի ձեւակերպումը:*

ա) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» յուրաքանչյուր համաձայնագիր կազմվում է ռուսերենով եւ կարող է ձեւակերպվել մի քանի օրինակից, որոնց քանակը նշվում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում, եւ որոնցից յուրաքանչյուրը բնօրինակ է.

բ) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում փոփոխությունները եւ լրացումները կատարվում են գրավոր՝ Կողմերի լիազորված ներկայացուցիչների ստորագրությամբ, ուժի մեջ են մտնում Համաձայնագրի

համար նախատեսված կարգով եւ ուժի մեջ մտնելուց հետո դառնում են Համաձայնագրի անբաժանելի մասը.

գ) «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում փոփոխությունները եւ լրացումները, որոնց կատարումը թույլատրվում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» Համաձայնագրին եւ սույն Ստանդարտ պայմաններին համապատասխան՝ ծանուցում ուղարկելու միջոցով, իրականացվում են միակողմանիորեն եւ չեն պահանջում մյուս կողմի լիազորված ներկայացուցչի ստորագրությունը եւ ձեւակերպումը՝ սույն բաժնի «բ» կետի պահանջներին համապատասխան: Այդ փոփոխությունները եւ լրացումները Համաձայնագրի անբաժանելի մասն են:

Թիվ 2 հավելված

**Հայաստանի Հանրապետության եւ
Եվրասիական զարգացման բանկի միջեւ
Կայունացման եւ զարգացման
Եվրասիական հիմնադրամի միջոցներից
«Ֆինանսական վարկի տրամադրման մասին»
2023 թվականի _____-ի համաձայնագրի**

Օրինակելի ձեւ

**Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից
Ֆինանսական վարկի ստացման հայտ**

(ռւղարկող կողմի ձեւաթղթի վրա)

**Ում՝ Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի
միջոցների Կառավարչին**

Ղազախստանի Հանրապետություն, 050051, քաղ. Ալմաթի, Դոստիկ
պող., տուն 220

Ումից՝ _____ (Ստացող)

Ամսաթիվը՝ _____

Հարգելի՛ պարոնայք,

Որպես Ստացող՝ Հայաստանի Հանրապետության եւ որպես Հիմնադրամի միջոցների Կառավարիչ՝ Եվրասիական զարգացման բանկի միջեւ _____-թ կնքված «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան՝ սույնով Ձեզ խնդրում ենք մեզ տրամադրել Ֆինանսական վարկի _____ տրանշը՝ Համաձայնագրում շարադրված կարգով եւ պայմաններով.

1. Վարկի արժույթը՝ ԱՄՆ դոլար
2. Տրանշի գումարը՝ (թվերով եւ բառերով՝ Համաձայնագրում նշված)
3. Հարցվող Ֆինանսական վարկի նպատակային օգտագործումը՝ (Համաձայնագրի պայմանների համաձայն):

Խնդրում ենք Ֆինանսական վարկի միջոցները մուտքագրել հետեւյալ բանկային վավերապայմաններին՝ (նշել Հաշվի վավերապայմանները)

Հարգանքով՝

ՍՏԱՑՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ

Ստորագրությունը՝

ԱԱՀ-ը՝

Պաշտոնը՝

ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝

ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ՝

Վ.Մ. Հովհաննիսյան

Ա.Գ. Շիրոկով

Հայաստանի Հանրապետության

ԿԶԵՀ-ի նախագծային բլոկի

ֆինանսների նախարար

Գործադիր տնօրեն

Թիվ 3 հավելված

**Հայաստանի Հանրապետության եւ
Եվրասիական զարգացման բանկի միջեւ
Կայունացման եւ զարգացման
Եվրասիական հիմնադրամի միջոցներից
«Ֆինանսական վարկի տրամադրման մասին»
2023 թվականի _____-ի համաձայնագրի**

Ֆինանսական վարկի պայմանները

Ֆինանսական վարկի գումարը	100.000.000,00 (Հարյուր միլիոն) ԱՄՆ դոլար
Վարկի արժույթը	ԱՄՆ դոլար
Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը	2024 թվականի դեկտեմբերի 31-ը կամ այլ՝ ավելի ուշ ամսաթիվ, որը սահմանված է Ստանդարտ պայմանների 1.03 բաժնի «զ» կետի դրույթներին համապատասխան:
Ֆինանսական վարկի տրամադրման ժամկետը	Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ 20 (քսան) տարուց ոչ ավելի՝ ներառյալ այն ժամանակահատվածը, որի ընթացքում Հիմնական պարտքի մարում չի կատարվում (Արտոնյալ ժամանակահատված): Արտոնյալ ժամանակահատված՝ Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 10 (տասը) տարուց ոչ ավելի: Ուժի մեջ մտնելու ամսաթիվը որոշվում է Համաձայնագրի 7.1 կետին համապատասխան:
Ֆինանսական վարկի գծով տոկոսները	Տոկոսադրույքը՝ Տարեկան 4%՝ SOFR-ի լողացող տոկոսադրույքը ֆիքսված տոկոսադրույքի վերահաշվարկելու համար տոկոսադրույքի սվոփի հիման վրա՝ գումարած տարեկան 0,5% մարժան, որը 2023 թվականի հուլիսի 20-ի

դրությամբ կազմել է տարեկան 3,9%:

Հաշվեգրման կարգը՝ Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «ա» կետին համապատասխան:

Տոկոսների վճարման ամսաթվերը՝

Յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը եւ սեպտեմբերի 15-ը՝ սկսած Ֆինանսական վարկի հատկացման առաջին ամսաթվից հետո վրա հասնող՝ նշված ամսաթվերից առաջինից եւ վերջացրած Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքի եզրափակիչ վճարման ամսաթվով:

Հիմնական պարտքի
մարման
ժամանակացույցը

Հիմնական պարտքի մարման ժամանակացույցը հաշվարկվում է՝ ելնելով այն բանից, որ Ֆինանսական վարկի յուրաքանչյուր ընտրված գումար ենթակա է մարման 20 (քսան) հավասար վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին՝ սկսած Արտոնյալ ժամանակահատվածի ավարտից հետո վրա հասնող՝ նշված ամսաթվերից առաջինից եւ վերջացրած նշված ամսաթվերից ամենից մոտ ամսաթվով՝ մինչեւ Ֆինանսական վարկի տրամադրման ժամկետի ավարտը:

ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝

ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ՝

Վ.Մ. Հովհաննիսյան

Ա.Գ. Շիրոկով

Հայաստանի Հանրապետության

ԿԶԵՀ-ի նախագծային բլոկի

ֆինանսների նախարար

Գործադիր տնօրեն